

պէտք էր իրաւական կապ մ'ունենալ արդէն կազմակերպեալ կաթողիկէ Եկեղեցւոյ մեծ աթոռներէն միոյն հետ: Եւ բնական կարգով վիճակակցեցաւ կեսարականին. ոչ եթէ՝ որովհետեւ Հայոց առաջնաւոր հոն գաստարակուած ու սրտով միացեալ էր անոր հետ, այլ աւելի զօրաւոր պատճառով մը, որ կեսարիոյ մետրապոլիտներէն ամենէն մեծաւորն էր Հայոց, և պատմական իրաւունքներ ալ ստացած էր՝ փոքր Հայոց կողմերը կանխաւ գտնուած ցանցաւ հայազգի քրիստոնէից ու եպիսկոպոսաց վրայ, որոնք իւր վիճակին կը պատկանէին. որով նորադարձ Հայաստանն ալ իւր իրաւաստեանն շրջանակին մէջ էր արդէն:

Յարմարական և մեր խնդրոյն համար աւելորդ բացատրութիւն մ'է Մեարթը երեցու զրածը Ժ դարէն, թէ մեր հայրապետը ի կեսարիա կ'երթային, որովհետեւ այն քաղաքը Թաղէոս առաքելոյն աթոռ եղած էր, և երբեմն հպատակ Հայոց Թագաւորութեան: Խնդրոյն էականն անոր իրաւական կողմն է, զոր կը խուզարկենք:

(Տարայարեւի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՔՆՆԱԿԱՆ ՆՏՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան աւտիւ)

(Ճար. տես Բազմ. 1926 էջ 69)

Դառնանք նորէն Մարիէսին: Մեզ մնում է քննել նրա մի շարք լեզուական և բնագրային ուղղումները, որ նրա աշխատութեան մէջ մեծ տեղ են բռնում և հեղինակն ևս նրանց առանձին նշանակութիւն տալու հակամէտ է: Երբեմն համեմատում է յունական բնագրի հետ և սխալներ է գտնում, որոնց համար և Եզնիկի յու-

նագիտութիւնը հարուածում: Հակառակ մեր խորին յարգանքի Եզնիկի նոր քըննադատի՝ որ այնպիսի սիրով և ուշադրութեամբ նուիրուել է իր գործին և նշանաւոր շնորհից մատուցել հայ գրականութեան ուսումնասիրութեան, դժբաղդաբար գովեստի խօսքեր չունինք նորա հասցէին առաջարկուած ուղղումների առթիւ: Նրա յինք մի առ մի:

Եզնիկի

Էջ 22. «կէսը անակզբնակից ինչ ընդ աստուծոյ երկեայ, զենկ ճոցա (i. Ե. չառնաց) արարչի լինել աստուծոյ կամեցան զնեւ. և կէսը ըստ նմանէ նիւթ ինչ...» Խնդիրը լեզուական թերիքը չէ, որ ներելի է և ուղղելի:

Նոյն իսկ իմաստի տեսակէտից սխալ է: Նախ Մարիէսը հետեւողական լինելու համար, եթէ կարծում է որ հայ և յոյն համեմատելի նախադասութիւնները բնագործին կապուած են միմեանց, պէտք է որ երկորդը պարբերութիւնը ևս լրացնէր համաձայն յոյնի. այսինքն և կէսը ըստ նմանէ նիւթ ինչ, զոր հիւշէ անուառնեն, թէ ի նմանէ արար գարարած «երկուցեայ լարեաց արարչի լաստոսած ասեկ»: ἐκ τοῦ φοβηθῆναι, τὼν κακῶν ποιητῶν εἰπεῖν τὸν θεόν.

Սակայն յաւելումների կարիք չկայ: Եզնիկի երկու եղածը ամփոփումն է նախընթաց Ե. գլխում բացատրած մտքի. «Եւ զի՞ պիտոյ է մեզ բնաւ մի ըստ միոյն է թուել, այլ համառօտ իսկ ասել, թէ ուստի՞ է այս ամենայն և ո՞վ է սկիզբն և գործիչ այնպիսի անպատեհից, բայց երե իցե ինչ լար գորոքիս, որ զայն ամենայն անհարթութիւնս տայցէ գործել, և ինքն իսկ արարիչ իցէ նոցա, զի գաստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է» (էջ. 20): Միւս եղածը. «Վասն որոյ կարծի թէ էր ինչ ընդ նմա, որում հիւշէ անուն էր, որ է նիւթ» և այլն (էջ. 21):

Մարիէս կարծում է, որ Մեթոդի երկու եղածներից մէկը՝ մոնիստական է և միւսն

1. Սփեք, 2, 31.

դուալիստական, մինչդեռ Եզնիկի մօտ երկուսն էլ դուալիստական են։ Տարբերութիւնը սակայն առերևոյթ է. ձևական և ոչ նական։ Ոչ Մեթոդը և ոչ Աղամանը չեն ցննում այն եղածը, թէ աստուած չարի արարիչ է, ընդհակառակը հէնց սկզբից ընդունում են, որ այդպէս մտածել «անպատշաճ է» և այս դրութիւնը ելակէտ ունենալով՝ ոմանք առաջարկում են ընդունել չարը իբրև հիպոստաս, ինքնուրոյն գոյացութիւն (ինչպէս մանիքեցիք), միւսները՝ գերադասում են յառաջ մղել հիւլէի գաղափարը և նրանից հանել չարը։ Վէճը այս հարցերի շուրջն է և թէ այն պարզ և անվիճելի երկուստեք եղածի, որ աստուած չէ չարի սկիզբը։ Հիւլէականներին ջրեղուց յետոյ, Եզնիկը Մեթոդի հետևութեամբ անցնում է հիպոստասականներին։ Սրանց հերքումը միևնույն ժամանակ հերքումն է հիւլէականներին, որովհետև եթէ չարը իբրև հասկացողութիւն հիպոստաս չէ, այլ միայն յատկութիւն, ուրեմն և հիւլէ չկալ։ «Եւ արդ զհիւլեայն խնդիր թողեալ զոր նիւթն աւանային կոշեն, ի չարեացն խնդիր եկեացուց զոր ի նմանէն իմանան։ Զի յորժամ չարիքն յայտ լինիցին թէ չեն անձնաւորք, անտի և հիւղն յանդիմանի թէ ոչ էր երբէք և ոչ բնութիւն անձնաւորք»։ Թ. էջ 34.

Վերև Եզնիկը գորութիւն բառով է արտայայտում նօստացի գաղափարը, այս տեղ նոյն իմաստն ունի և «անձնաւոր», կամ յետոյիսն «անձնաւոր բառը։ Մեթոդի պատճառաբանութիւնը Եզնիկի մօտ կոճատ և մզուց ձևի է վերածածաւ։ Մարիէս միշտ ձգտելով յոյն շրջանակի մէջ մտցնել, դժուարանում է հասկանալ և զարձեալ ուղղումներ է առաջարկում. «անձնաւոր կարգում է մասնատոր, պատճառն ուղղում է քաջ(!) չարն. ընդունում է և Գալէմբարեանի ա-

ռաջարկած ընթերցումը չար՝ փոխանակ բնագրի արարիչ։

Եւ այս բոլոր ջանքերը ի զուր են։ Եզնիկի դատողութեան թելը հետեւեալն է։

Չարը հիպոստաս, անձնաւոր չէ, այսինքն անհատական գոյութիւն ունեցող ինչ չէ, այլ միայն արգասիք անձնաց, այսինքն յատկութիւն։

Վերջինք չարի մի տեսակը, որ բըղխում է մարդուց. ասենք սպանութիւն, ընութիւն։ Մարդը անձնաւոր է, իսկ նրա գործած չարիքը իբրև բարբի արդիւնք, «բարքն չանձնաւորք», և ոչ անձնաւոր ինչ։

Ենթադրենք, սակայն, հակառակը, ինչ որ ընդդիմախօսն է պաշտպանում, որ չարիքը, իրօք, անձնաւոր է։ Այն ժամանակ ստիպուած պիտի լինենք ընդունելու, որ նրա պատճառը ևս անձնաւոր է, որովհետև տեսանելի չարը անտեսանելի չարի մասն է։ Պատճառն այստեղ ամբողջութեան իմաստ ունի՝ ինչպէս աստուած բարոյ լիութիւն է, այնպէս էլ այն, որ չարի պատճառ է համարում, չարի ամբողջութիւն է։ Այսպէս հասկանալով, պէտք չենք տեսնում պատճառ կարգալ բովանդակ չար, եթէ քաջաբ ասելով, այս է ըմբռնում Մարիէսը։

Սակայն յայտնեցիք ի՞նչ է հետևում. եթէ չարի պատճառը անձնաւոր ոմն է, ուրեմն «էր երբէք զի բնաւ չէր ամենևին ինչ արարիչ բովանդակ», այսինքն կար ժամանակ, երբ այդ անձնաւոր ոմն լիակատար արարիչ չէր չարի։ Ինչու համար. որովհետև աստուած դեռ չէր ստեղծել մարդուն, որը «մասանց չարեաց» արարիչ է, որը մասնաւոր արարիչ է չարի։ Եւ ուրեմն սորա ստեղծուելովը՝ այն անձնաւոր ոմն արարիչ չարի կը լրանայ, կ'ամբողջանայ։ Իայց մարդուն աստուած է ստեղծել. հետեւապէս սորանով աստուած

1. Զորոբրեճ է Թարգմանած նօստացի նաև Պրիկի թիւում. գմարնացելոյն աստուծոյ բանն զօրութիւն. Գեթը Բիթը, էջ 2. Ստեփանոս Սիւնեցու բեղած բուզը հոտովոյ ի չայս ցրտիճան մէջ կիւրեղ Աղեքսանդրաւ.

ցու թիւ. զլուսներն են բերուած, որ նօստացի Թարգմանած է անձնաւորութեան. Բ. զլ. անդ. էջ 361. Իսկ կիւրեղ առ Նեստոր դրոշմ, մենայն Բ. զլուս Թարգմանած է Զորոբրեճ. Անդ. էջ 404.

պատճառ է դառնում չարի ամբողջութեան, ասել է թէ «ե բաւանդակ իսկ չարեացն արարիչն աստուած է»։ Անհեթեթ եզրակացութիւն. դատողութիւնը հասցրեց ad absurdum, ուրեմն սխալ է ընդունել, որ չարն անձնաւոր է։

Մարիէս, էջ 167, կանգ է առնում նաև հետեւեալ պարբերութեան վերայ և ուզում է մօտեցնել Մեթոդին։ «Ձի ուր երկու ոք ի միասին իցեն, հարկ է թէ միայն ոք իցէ և ուր երկու ոք զատ իցեն, հարկ է թէ իցէ որ զատանիցէ ի միջի»։

Փննադատի ջանքերն այնքան հեռուն են գնում, որ ուզում է մինչև անգամ Աղամանդին սրբագրել, որ հաշտեցնի Մեթոդի հետ։ Այն ինչ Աղամանդի բնագիրն իսկ վկայում է, որ Եղնիկի նախադասութիւնը պէտք չունի փոփոխման և իրար հետ համերաշխ են։

Արդարև, վէճը այն մասին է թէ՛ երկու ոք եթէ միասին են, պէտք է և մի երբորդը լինի իրր խտրոց, երկուսին բաժանող։ Երկուսի մի միութիւն կազմելու դէպքը Եղնիկը բացէ բաց ձգած է, որ լոկ դիպակտիքական լրացումն է, որ վէճի էութեան համար արժէք չունի։ Պայքարը երկու սկզբունքն ընդունելու հարցի շուրջն է և նորա դէմ. երկուսը ենթադրում է և մի երբորդը որ անջրպետում է — ուրեմն անընդունելի է։

Էջ 170։ «Արդ հարկ է ի պատճառ չարեացն գալ և ցուցանել թէ ուստի լինին չարիքն և չէ մարք ասել թէ չէ պատճառ չարեաց աստուած այնու գիտաբնիբը նմա զհիւղն դնեն»։ Իմաստի տեսակէտից հարկաւոր լրացումն է, բայց մեզ թւում է, որ կարելի է խուսափել ուղղութից, կարդալով «չէ՞ պատճառ չարեաց և այլն» իրր հարցական, արդեօք աստուած չարեաց պատճառ չէ՞ և այն ժամանակ, երբ նրա քով հիւլէն են գնում։

Էջ 175. «Մթարն շողայցեն» առաջարկում է կարդալ «մթարն շողախ իցեն»! միանգամայն անտեղի։ Մթար այս տեղ նշանակում է աչքի ճպուռ, որ սպիտակ լինելով կարող է շողալ, ըստ կազ-

մութեան մութ + ար (առնել) ընդհանրապէս մթազնող բան է նշանակում և այդպէս է անուանում Եղնիկն «զարան և զրիմն»։ (Հմմ. Վեցօրեայք, էջ 115. զմրարուրիսն ունիցի)։

Էջ 178. «Եւ պահէ կենդանի... և զգայականացն անշնչից յիրաքանչիւր կայանի»։ Մարիէս կարդում է «և զգայական ան անշնչից»! Զգայական չի նշանակում *doué de sensibilité*, այլ *sujet à sensibilité*, այսինքն կրաւորական մտաքով է գործ ածուած։ Ուրիշ տեղ նորա փոխարէն գործ է ածում զգայուն բառը նոյն իմաստով, այսպէս էջ 96. «որ ինչ ի զգայնոցս շուրափի կամ զնի կամ ազդի, այն մարմնաւոր է և որ ի, զգայնոց ոչ ազդի անմարմին» և այլ։ Ամեն ինչ, որ ենթակայ է մեր զգայարաններին, այն զգայական է։ Անշունչ զգայական ասելով Եղնիկը հասկանում է երկնի լուսաւորները, ինչպէս շարունակութիւնից երևում է, էջ 14. «արդ բարիքն է արեգակն... և այլքն յանշնչոցն արարածոց»։

Մարիէս արդար է երբ անհարթութիւն է գտնում նախադասութեան մէջ ճերաւ կանական տեսակէտից, բայց իր ուղղումը չի շտկում գործը, որովհետև «պահէ կենդանի... զգայական ան» ևս անյարիր է։ Բնադրող պէտք է թողնել անփոփոխ, անկանոնութիւնը հեղինակին է։

Էջ 179. «Ծովացուլ զկով գործեաց. ուղղել» ծովացուլս կով գործեաց՝ դժուար թէ պէտք կայ։ Եղնիկի խօսքերը որոշ միտք ունին։

Էջ 180. Սալարե փոխանակ մալարե կասկածելի է խարափ, հաւասօրէն, խարխափ, բայց ոչ հրեք խարափ։

Էջ 181. Սակայն իրր սակ այն, ինչպէս և երկար մեկնութիւնները եղև, առ, մանաւանդ քանզի և որպէս գի բառերի առթիւ աւելորդ բծախնդրութիւններ են և հակառակ հայ լեզուի ոգուն։ Կենդանի խօսքի ազդեցութիւնը հաշուի է առնելու այսպիսի դէպքերում. (որպէս գի հմմ. որպէս որ)։

Էջ 183. Անուան՝ ուղղել անասունս,

հաւանական է, սակայն անհրաժեշտութիւն չէ. Հմմ. վեցօրեայք. էջ 119. «այս անուն, ասեն, գանգրահեր է և այլն. և մանաւանդ Յաճախապ. 34. զի յանուանց ուսուցանեն մեզ երկնաւորք և այլն:

էջ 184. Որ ընդ անբառ ինչ որ ուրեք, իբրև թէ պէտք է ուղղել՝ ընդ դէմ քառ ինչ որ Աւելի հաւանական է սկզբի որ կարգաւ որ համաձայն վերջին ուրեք որ կրկնութիւն է և անհարթութիւնը կը վերանայ:

էջ 186. Դիւր ճմանել լուսնի փոխել զստիկ մանել, կամայական վարկած է:

էջ 189. Այլ թէ ցերբորդ երկնի ֆօս տրիտոս օսրանօս ասելոյ Մարիէս ուղղում է առանց յիմ ասելոյ, իբր sans dire dans lequel.

Սխալ մեկնութիւն: Խօսքը հայերէն և տողի մասին է, որ համապատասխանում է ըստ Եզնիկի յոյնի տօմ արթերն ձրթօն, այսինքն յօդին: Հետեւապէս կարդալու է առանց — ինչ, փոխ. առանձինն, առանց տօմ ի,—իճն (թերևս—ենն,) = նու, և տառի հին անունն է:

էջ 190. զՄարկիոնն ուղղել զմարդիկն, կասկածել է: Պարզ հեգնութիւն է Մարկիոնի հասցէին:

էջ 104—112. Մարիէս փորձում է բացատրել այն տարբերութիւնը, որ կայ Եզնիկի և Մեթոդի մէջ մի կարևոր կէտում, այն է Եզ. էջ 44. Դժբախտաբար յօնքը շինելու տեղ բնագրի աչքն է հաւում, աւելորդ ենթադրութիւններով: Մեր կարծիքով Եզնիկի տարածայնութեան աղբիւրը մի պարզ թիւրիմացութիւն է. ճիշտապէս հայը հասկացն է Ս. Գրքի վարդապետութիւն, և ոչ սատանայի, ինչպէս շիտակ իմաստն է բնագրի.

« Ուստի ոչ ոք կարէ անարար ինչ և անձնաւոր գշարն ցուցանել. և դարձեալ ոչ յարարչն, այլ յանաստութենէ դէպեալ ստունգանողին և յուրեք վարդապետութենէ զրդեալ »: Մինչև այստեղ հարգաւոր է բնագրին, բայց հետեւալ տողերից սկսւում է թիւրիմացութիւնը:

2) եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր,

3) ապա ոչ ի բնութենէ արարածոյ ծ) և յաստուածեղեն գրք նմա վարդապետութիւնը ընծայանար.

4) որպէս առ ուրեք ստունգանակ բարբառն եթէ ի մակութենէ մարդիկ ի ինձնա չարին միտեալ են.

ei γάρ οὕτως εἶχεν.

ծ) οὐκ ἂν ἄδωφ κατὰ διδασκαλίαν τοῦτο προσέγενετο, τῆς α) φόσεως αὐτῆς οὕτως εἰχούσης.

λέγει δὲ τις θεία φωνή μετὰθρηξέναι τὸν ἀνθρώπον τὰ πονηρά.

Երկու բնագիրը միանգամայն համերաշխ են ընթանում, միայն երրորդ կէտում հայը սխալ է ըմբռնել խառն ճիշտապէս, ինչպէս ասացինք, ազդուելով, անշուշտ, յաւերջ որդի նախադասութիւնից, ուր, իբրք, կոչում է արած Ս. Գրքին: Յոյնն ասում է. « և ոչ նմա ի վարդապետութենէ այս ընծայանայր, զի բնութիւն նորա այսպէս եղեալ է. (կամ ի բնութենէ այդպէս աւարտեալ) »: Իմաստը պարզ է. չարը բնածին չէ, այլ ստունգանողի անհնազանդութեան հետեւանքը: Դրողը ստատանան է, « ուրուք վարդապետութիւն »: Եթէ մարդը բնութեամբ չար ստեղծուած լինէր, այն ժամանակ սատանայի վարդապետութեան պէտք չէր լինի, քանի որ մարդը բնութեամբ չար է կամ չար է ստեղծուած: Յոյնը Ս. Գրքից վկայութիւն է բերում, որ ցոյց տալ, թէ մարդը սովորել է, գիտացել է չարը աստանայից: Իսկ հայը միանգամ սխալ հասկանալով յիշածս պարբերութիւնը, մոլորում է և զփոթում է Ս. Գրքի մէջբերումը, քաղելով ոչ այն, որին ակնարկում է բնագիրը (Երեմ. 13, 23), այլ մի ուրիշը, որ ակելի մօտ է իր ըմբռնումին (այն է Իմնդ. 8, 21), որ է. եթէ չարն ի բնութենէ է, ապա ինչո՞ւ Ս. Գրքի մէջ ասուած է, որ մարդը ի մակութեանէ միտեալ է զէպի չարը և ոչ թէ մարդը ի բնէ չար է: Վարդապետութեան բառի թիւր ըմբռնումը դժուար կա. ցուցնել է ստեղծում թարգմանողի համար հետեւեալ փոստաւ օտչից ծնեաց եղածից նախադասութեան իսկական իմաստը հասկանալու և նա թարգմանում է՝ ի բնութենէ արարածոյս:

1) զի ոչ եթէ այնպիսի ինչ օծծե γάρ τοιούτων φθ. հաստատուած բնութեամբ, ցիւ εἰληφός δ' ἀνθρώπου, զմարդն ցուցանել կարէ ոք.

Բնագրերի համեմատութիւնից բխած յայտարարութեամբ ընկնում են Մարիէսի մանուածապատ լեզուական պըտոյտները, որ տանում են դէպի բնագրի աղանաւումը: Այսպէս օրինակ յնդերին, որ ամբողջ դատողութեան և վէճի հիմնաքաղն է, փոխել՝ յոնդերին նշանակում է յանցանք գործել: Եզնիկի յունագլուխութիւնը ևս կասկածի ենթարկել, և նորան վերագրել լէյա և քաժաւ բառերի շփոթումը՝ հիմք չկայ:

Էջ 207. «Մինչև եկն Աբրահամու աստուածպաշտութիւնն և աղաւաղեաց զայն», (Եզ. 207) համեմատում է յոյնի ԵՅՑ ԾՕՍ ՍՄՆԳԹՊ ԵՂ ԴՕՍ, Αβραάμ θεοσεβεία և պատրաստ է դարձնել Եզնիկի լեզուական աղիտութիւնը յանդիմանելու: Մինչդեռ բերած նախադասութիւնս իսկապէս Հակառակդողներէ եղածն է, որ պիտի հերքէ Եզնիկը և հերքումը, իրօք, տեսնում ենք Գ.ԺԵ. էջ 229-230. «բայց թէպէտ և հեթանոսութիւն եմուտ յաշխարհ, այլ աստուածպաշտութիւնն ոչ տմենին պակասեաց: Եւ յայտ անտի է, զի գնացեալ Աբրահամ ի հեթանոսացն եկն աստուածապաշտաց պատահեաց»: Թուում է որ այստեղ է ՍՄՆԳԹՊի թարգմանութիւնը պատահեաց և ոչ թէ աղաւաղեաց:

Երբորդ զԵՐԻ վերջին գլխի վերջին երկու էջերը 240-241 պատկանում են չորրորդ զբրին և նրա ներածականն են: Շատ տարօրինակ է, որ նախորդ գլուխներում մանրամասնօրէն յոյն փիլիսոփաներին և նրանց զարդները կրկնուող յետոյ, վերստին խօսքը շրջում է դէպի յունաց իմաստունները, և սկսում Հնարդից ու Հոմերից: Այս մի կարևոր պարագայ է և ցոյց է տալիս, որ Մարիէսի հերքումը իմբագրական ձեռքով է միացրած միւս զբրերի հետ, սկզբում՝ Վալենտինի գործի հետ:

Հայի օտար կաղապարը թուում է թէ աւելի ծանրակշիռ ներածութիւն է ունեցել. և հայը կոճատ և ամփոփ ձև է տուել: Այստեղից է ծագում և այն զոնարուութիւնը, որ հանդիպում են մասնագէտներ

ըր, ներածականի իմաստը և նրա կապը Մարիէսի զբրի հետ ճշմարտապէս ըմբռնելու համար:

Մարիէսն ևս փորձում է իր ոյժերը և պէտք է խոստովանել, բաւականին չարաչարում է հայոց լեզուն: Սակայն լեզուական բռնութիւնները մեղմանում են նորանով, որ ընդհանրապէս ճիշդ է մեկնում բնագրի իմաստը:

Յոյն փիլոսոփաների հասցէին հայ հեղինակը դիտում է, որ աստուծուն չնաւնայողները «զիարդ զաստուծոյ ճառել մտաբերիցին: Եւ մանաւանդ որ քան զամենեւին իմաստնազոյն համարին զՊլատոն, որ վասն աստուծոյ և վասն հոգւոց և վասն արարածոց խօսել յօրարեցաւ»:

Գերմաներէն թարգմանութիւնը ունի. էջ 171. und insbesondere derjenige, welcher für den weisesten von allen gehalten wird, Plato welcher և այլն. Մարիէսը թարգմանում է. էջ 148. Et surtout celui-là qui est estimé plus pieux que tous, (plus pieux) que platon, lequel և այլն:

Մեզ թուում է, որ պէտք է թարգմանել. «մանաւանդ նա, որ համարում է Պլատոնին ամենից իմաստուն», այսինքն նա, որի աչքում ամենամեծ հեղինակութիւնը Պլատոնին է: Հետևապէս որ... համարին, պէտք է կարդալ որ համարեւն. այսինքն ոչ թէ որը համարում է, այլ որը համարում է: Միացած մասը բնագրի թողնելու է, ինչպէս կայ: Անարկը վերաբերում է Մարիէսին. հեղինակը առաջիկայ հերքման, առարկութեան ոյժ տալու համար, հէնց սկզբից յայտարարում է, որ յանդիմանելի վարդապետութեան, այն է Մարիէսականութեան աղբիւրը Պլատոնն է, որը չնայելով որ փիլիսոփաներից ամենէն աստուածապաշտն է, բայց էլի տկարամիտ է:

Հասկանալի է, որ նորա վերայ հիմնած ուսմունքը ևս թոյլ և սխալ պիտի լինի: Արժեքաւոր է Մարիէսի համեմատութիւնը Իրինէոսի՝ quibus religiosior Plato ostenditur մտքի հետ:

Ներածականը նուիրուած է, ուրեմն, Պղատոնի յանդիմանութեան: Նորան վարկարեկ անելով, բնականօրէն կանխապէս խախտում է նորա հետեւորդի Մարկիոնի ուսման հիմը:

Այսպիսով բացի մի քանի մանրուքներէց, զրեթէ բոլոր առաջարկուած ուղղութիւններն անվստահելի են, ասանք մեղմ լեզուով: Սորանով սակայն միտք չունենց նսեմացնելու Մարտիէսի աշխատութեան յարգը: Թերեքները մի կողմ՝ Եզնիկին նուիրած ուսումնասիրութիւնը այն թանգազին լուծման է, որ բերում է հեղինակը հայ գրական-պատմական գանձանակին: Անձնապէս շնորհակալ ենք, որ մեզ առիթ տուեց մեր գիտողութիւնները ևս յայտնելու:

ՊՐՈՓ. Ն. ԱՐՈՍ

Գ Ր Ա Կ Ա Ն

ԳԱՐՆԱՆ ԾԻԼԵՐ



Ա.

ԴԵՊ Ի ՇԻՒԻՄ...

Հովերն աշխան, ցուրտ հովեր
Պաղ հեզանքով կ'արշաւեն,
Սուրհանդակները մահու:
Պերճանքներու սովորած
Դըշնոյ - Բնութիւնն է ահա
Որ զարդերէն կողողաւ:
Կու լայ սըզով տարածամ:
Կը ծագի օր մ'ալ դըծխեմ
Թուխ երկընդով անախ,
Ու կը ձիւնէ, կը ձիւնէ
Մենող բնութեան հիւսելով
Ամբիծ պատանք մը սպիտակ:
Ու կը սուլեն դեռ հովեր...
Սողոսկելով ամէն յարկ,
Կը գուժեն բոթը տըխուք.
«Մեռաւ բնութիւնն համբէն»:

Փողոցներէն քաղաքին
Հովեր՝ սպիտակ ոգիներ,
Հեծկըլտալով կը սուրան

Ջերդ լալկաններ ողբերգակ.
Ու ամէն տուն սըգաւոր
Կը զարդարէ իր քիւրն
Անթիւ, անբոց մոմերու
Բիւրեղայէն ջահերով.
Թաղմանական հանդէսն է
Վաղամեռիկ բնութեան...
Ամէն իրկուն օդին մէջ՝
Լուս ժամերուն՝ կը շրջին
Խումբ խումբ տըխուք ոգիներ
Մրնջելով «Անդորանք»
Անոնց համար որ մեռան...:

Բ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ

Կեանքեր հազար, կեանքեր բիւր
Խաւարմած բանտին մէջ,
Անշունչ, անձայն և անշարժ
Կեանքեր՝ մահուան մէջ ապրող,
Որ յոյսերով կը սպասեն...
Չէ՞ք լսեի ձայն մը նըրբին
Խորհրդաւոր թրթռումով
Որ հողին տակ կը յածի,
Կը զաւարի օծի պէս...
Թաքուն պատգամն է. կ'երթայ...
Երկէն երկիր, ծովէ ծով,
Տալու սիրուն յոյսերուն
Աղու մեղու բոյսերուն
Նորոգ կեանքի մ'անտիս.

«Արթընցէք, ով բիւր կեանքեր,
Գարունն ողջոյն կու տայ ձեզ.
Արեգակին նետերէն
Ալ պատեցաւ ձեր պատանքն,
Ու հովերէն ցիրուցան
Եղան անոր ծըէններ.
Ահա արփին կը դառնայ
Համբոյրներու կարօտով.
Ահա հազար վըտակներ
Մատըռակել ձեզ կու գան
Կեանքի բաժակն հեշտալի.
Եւթք ըմպել, գինձալ
Եւ արփոյն տակ ննջելով
Ոսկի երազ անըրջել.
Մինչև շանթերը գոռան
Խոռոված երկնից երեսին,
Եւ ըսթափած ձեր քունէն
Հեզնէք յոխորտ մահացուն՝
Որ կը խուսէ սահմըկած...
Մինչև կաթէ աստղերէն

